ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 27/08

Քաղ. Երևան 04 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ տեքստում՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, իր 2008թ. նոյեմբերի 4-ի նիստում (արձանագրություն № 65/1) քննարկեց «Կրեատիվ» ՓԲԸ-ի (Պրոմիշլեննիյ պող. 19, ք. Կիրովգրադ, 25014, Ուկրաինա) ներկայացուցիչ՝ արտոնագրային հավատարմատար, Է.Նահապետյանի 2008թ. օգոստոսի 16-ի բողոքը «Ինտերոյլ» ՍՊԸ-ին (Ռուսաստանի Դաշնություն) պատկանող «ДИВНОЕ» գրանցման թիվ 13021 բառային ապրանքային նշանի գրանցման դեմ:

2008թ. հուլիսի 10-ին «Ինտերոյլ» ՍՊԸ-ի (Ռուսաստանի Դաշնություն, 142704, Moskovskaya obl., Leninskiy r-on, Kaluzhskoe shosse, 21 km) անվամբ գրանցվել է «ДИВНОЕ» բառային ապրանքային նշանը (գրանցման թիվ 13021) 12.11.2007թ առաջնությամբ:

03.04.2008թ. «Կրեատիվ» ՓԲԸ-ի (Պրոմիշլեննիյ պող. 19, ք. Կիրովգրադ, 25014, Ուկրաինա) կողմից ներկայացվել է «ДИВНОЕ» բառային ապրանքային նշանի գրանցման հայտ (թիվ 20080303 հայտ)՝ հայտում նշելով ցուցահանդեսային առաջնության մասին, որով գործավարությունը դեռ չի ավարտվել:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Բողոքարկողը նշում է, որ «Կրեատիվ» ընկերությունը որը գրանցված է Ուկրաինա 25014, ք. Կիրովգրադ, Պրոմիշլեննիյ պրոսպեկտ 1 հասցեով, 03.04.2008թ գործակալություն հայտ է ներկայացրել «ДИВНОЕ» ապրանքային նշանը գրանցելու համար (հայտ 20080303)՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տեքստում՝ օրենք) 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն խնդրարկելով ցուցահանդեսային առաջնություն, ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր և վճարելով համապատասխան պետական տուրք:

Սակայն պարզվել է, որ ՀՀ տարածքում գրանցվել է «ДИВНОЕ» ապրանքային նշանը (գրանցման թիվ 13021) «Օբշչեստվո Ս Օգրանիչենոյ Օտվետստվեննոստյու «Ինտերոյլ» սեփականատիրոջ անունով 12.11.2007թ առաջնությամբ, այսինքն ավելի ուշ առաջնությամբ, քան «Կրեատիվ» ընկերության կողմից խնդրարկվող ցուցահանդեսային առաջնության թվականը:

Բողոքարկողը նշում է, որ այսպիսով, փորձաքննությունը թույլ է տվել վրիպակ և սխալմամբ գրանցել է «ДИВНОЕ» ապրանքային նշանը «Օբշչեստվո Ս Օգրանիչենոյ Օտվետստվեննոստյու «Ինտերոյլ» սեփականատիրոջ անունով, հաշվի չառնելով «Կրեատիվ» ընկերության կողմից

ներկայացված «ДИВНОЕ» ապրանքային նշանի դ 20080303 հայտը 2007թ հոկտեմբերի 4-ի խնդրարկվող առաջնությամբ:

Ելնելով օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով, 28-րդ հոդվածի 1մասի «ա» ենթակետով, 29-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետով սահմանված դրույթներից, խնդրել է գրանցման դ13021 «ДИВНОЕ» ապրանքային նշանի իրավական պահպանության տրամադրումը անվավեր ճանաչել և այդ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարել:

Բողոքարկողը բողոքին կից և 26.09.2008թ-ին գործակալություն ներկայացված գրությամբ ներկայացվել են հետևյալ փոստաթղթերը՝

1. 90000 դրամ պետական տուրքի վճարման փաստաթուղթը,

2. լիազորագրի պատճենը,

3. «Կրեատիվ» ընկերության կողմից ներկայացված «ДИВНОЕ» ապրանքային նշանի դ 20080303 հայտի և ստացականի պատճենները,

4. գործակալության պաշտոնական տեղեկագրից քաղվածք դ13021 «ДИВНОЕ» ապրանքային նշանի գրանցման մասին.

5. Ցուցահանդեսային առաջնությունը հաստատող փաստաթղթի պատճենը, այն է՝ «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի կողմից 07.02.2008թ «Կրեատիվ» ընկերությանը տրված տեղեկանք առ այն, որ չորրորդ սննդարդյունաբերության վրացական միջազգային Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսում, որը տեղի է ունեցել 2007թ հոկտեմբերի 4-6 ներառյալ Վրաստանում, Թբիլիսի քաղաքում, Շերատոն Մետեխի Փելես Հոթել հյուրանոցում, «Կրետիվ» ընկերությունը հանդիսանում էր նրա մասնակից և ցուցահանդեսին ներկայացրել է հետևյալ ապրանքատեսակները՝ «Արևածաղկի սննդային յուղ» զատված և չզատված, «Խոհարարական ճարպ» և «Դելիկատեսային մարգարին», «ДИВНОЕ» ապրանքային նշանով.

6. Առուծախի 3 պայմանագրեր, կնքված «Կրետիվ» ընկերության և «Գլորիա Ֆուդ Կո» ՍՊԸ միջև 20.10.2005թ դ30, «Կրետիվ» ընկերության և «Բրավո-Բետո» ՍՊԸ միջև 03.10.2006թ դ60, «Կրետիվ» ընկերության և «ԿՐԵ-ԱՐ» ՍՊԸ միջև 02.10.2007թ դ77, «Արևածաղկի սննդային յուղ», «Խոհարարական ճարպ» և «Դելիկատեսային մարգարին» ապրանքների վերաբերյալ, մակնշված «ДИВНОЕ» ապրանքային նշանով:

7. Չորրորդ սննդարդյունաբերության վրացական միջազգային Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսում մասնակցելու վերաբերյալ հավաստագրի բնօրինակը, որը ուսումնասիրվել է բողոքարկման խորհրդի կողմից և վերադարձվել է, պատճենը գտնվում է գործի նյութերում:

«Ինտերոյլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանը 03.11.2008թ ներկայացրել է գրավոր առարկություն: Առարկողի փաստարկները հետևյալն են:

Առարկողը նշել է, որ ի պատասխան իր վստահորդի հարցմանը, որով ցանկացել է ճշտել, թե «Կրեատիվ» ընկերությունն արդյոք՞ մասնակցել է 2007թ հոկտեմբերի 4-6 Թբիլիսիում անցկացված Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսին, ստացել ենք նամակ-պատասխան, որում նշված է, որ «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի տնօրեն Կոմունադզեն չի հիշում՝ տվել է արդյոք՞ «Կրեատիվ» ընկերությանը ցուցահանդեսին մասնակցությունը հաստատող տեղեկանք, թե ոչ, բայց հստակ հիշում

է, որ Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսի բոլոր մասնակիցները նշված են «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի վեբ-կայքում՝ «http;/www.interfoodgeorgia.ge/ru/2007/exhibitors list/:»:

Առարկողը նշում է, որ հաշվի առնելով, որ այսօրվա դրությամբ Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսին մասնակցությունը հաստատող միակ փաստաթուղթը հանդիսանում է «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի վեբ-կայքը, իսկ «Կրեատիվ» ընկերությունն մասնակիցների թվում նշված չէ, ապա վստահ կարելի է ասել, որ սույն ընկերությունը չի մասնակցել Վրաստանում անցկացված վերոնշյալ ցուցահանդեսին: Բայց, իրենց իսկ խոսքերով, նույնիսկ եթե մասնակցել են, ապա միայն մեր վստահորդի թույլտվությամբ: Հարկ եմ համարում նշել, որ մեր վստահորդի՝ «Ինտերօյլ» ՍՊԸ-ի և «Կրեատիվ» ընկերության միջև 2007թ-ի ապրիլի 14-ին կնքվել է լիցենզիոն պայմանագիր, որի երկրորդ կետի համաձայն՝ մեր վստահորդը «Կրեատիվ» ընկերության թույլ է տալիս օգտագործել իրեն պատկանող «ДИВНОЕ» ապրանքային նշանը Ուկրաինայում և ԱՊՀ երկրներում: Հետևաբար, 2007թ-ի հոկտեմբերի 4-6 Թբիլիսիում անցկացված Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսին մասնակցել է մեր վստահորդի թույլտվությամբ: Հայտնում եմ նաև, որ «ДИВНОЕ» ապրանքային նշանը գրանցվել է մի շարք երկրներում՝ 2003թ-ին՝ ներառյալ Ուկրաինայում (Վկ. No48955, գր. թվ.՝ 10.04.2003թ):

Առարկողը առարկությանն կից ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը՝

1. լիազորագիր
2. Ուկրաինայում 13021 «ДИВНОЕ» ապրանքային նշանի գրանցման վկայագրի պատճենը
3. Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսին մասնակիցների վեբ-կայքից վերցված քաղվածքը
4. «Ինտերօյլ» ՍՊԸ-ի և «Կրեատիվ» ընկերության միջև կնքված լիցենզիոն պայմանագիրը
5. Մեր վստահորդի հարցման պատասխանը:

Այսպիսով, առարկողը խնդրել է մերժել «ДИВНОЕ» գրանցման թիվ 13021 բառային ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ բողոքը և այն թողնել ուժի մեջ:

Բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը, հաշվի առնելով կոլեգիայի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը պարզեց հետևյալը:

2008թ. հուլիսի 10-ին «Ինտերօյլ» ՍՊԸ-ի (Ռուսաստանի Դաշնություն, 142704, Moskovskaya obl., Leninskiy r-on, Kaluzhskoe shosse, 21 km) անվամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է «ДИВНОЕ» բառային ապրանքային նշանը (գրանցման թիվ 13021) 12.11.2007թ առաջնությամբ:

03.04.2008թ. «Կրեատիվ» ՓԲԸ-ի (Պրոմիշլեննիյ պող. 19, ք. Կիրովգրադ, 25014, Ուկրաինա) կողմից ներկայացվել է «ДИВНОЕ» բառային ապրանքային նշանի գրանցման հայտ (թիվ 20080303 հայտ)՝ հայտում նշվել է ցուցահանդեսային առաջնության խնդրարկման մասին, որով գործավարությունը դեռ չի ավարտվել, այսինքն համապատասխան որոշում դեռ չի կայացվել և առաջնությունը դեռ չի սահմանվել: «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածների համաձայն փորձաքննությունը կարող է ապրանքային նշանի առաջնությունը սահմանել ինչպես նախնական, այնպես ել հայտարկվող նշանի փորձաքննության ընթացքում, որը դեռ չի կատարվել:

Ինչ վերաբերում է առարկողի այն փաստարկին թե ի պատասխան իր վստահորդի հարցմանը, ստացել են նամակ-պատասխան, որում նշված է, որ «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի տնօրեն

Կոմունադզեն չի հիշում՝ տվել է արդյոք՞ «Կրեատիվ» ընկերությանը ցուցահանդեսին մասնակցությունը հաստատող տեղեկանք, թե ոչ, բայց հստակ հիշում է, որ Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսի բոլոր մասնակիցները նշված են «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի վեբ-կայքում՝ «http;/www.interfoodgeorgia.ge/ru/2007/exhibitors list/:», և որ հաշվի առնելով, որ այսօրվա դրությամբ Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսին մասնակցությունը հաստատող միակ փաստաթուղթը հանդիսանում է «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի վեբ-կայքը, իսկ «Կրեատիվ» ընկերությունն մասնակիցների թվում նշված չէ, ապա վստահ կարելի է ասել, որ սույն ընկերությունը չի մասնակցել Վրաստանում անցկացված վերոնշյալ ցուցահանդեսին, ապա բողոքարկման խորհուրդը մանրամասն ուսումնասիրել է ներկայացված «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի կողմից 07.02.2008թ «Կրեատիվ» ընկերությանը տրված տեղեկանքը և Չորրորդ սննդարդյունաբերության վրացական միջազգային Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսում մասնակցելու վերաբերյալ հավաստագիրը և պարզել է, որ դրանք ստորագրված են հենց «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի՝ ցուցահանդեսի կազմակերպչի, տնօրեն Դ.Վ. Կոմունադզեի կողմից և որոնք կնքված են «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի կնիքով: Ուստի պատշաճ կարգով ստորագրված և կնքվածեն և բավարար հիմք են հանդիսանում ցուցահանդեսային առաջնությունը սահմանելու համար:

Բողոքարկման խորհուրդը հիմք ընդունելով «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի կողմից 07.02.2008թ «Կրեատիվ» ընկերությանը տրված տեղեկանքը և Չորրորդ սննդարդյունաբերության վրացական միջազգային Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսում մասնակցելու վերաբերյալ հավաստագրի բնօրինակը, որոնք հիմնավորում են «Կրեատիվ» ընկերության մասնակցությունը չորրորդ սննդարդյունաբերության վրացական միջազգային Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսում՝ որտեղ ներկայացվել է «Արևածաղկի սննդային յուղ» զատված և չզատված, «Խոհարարական ճարպ» և «Դելիկատեսային մարգարին» ապրանքները մակնշված «ДИВНОЕ» ապրանքային նշանով, հաստատված է համարում «Կրեատիվ» ընկերության կողմից հայտարկված «ДИВНОЕ» ապրանքային նշանի ցուցահանդեսային առաջնության առկայությունը 04.10.2007 թվականի դրությամբ, որը «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է ցուցահանդեսային առաջնության թվականը:

Ինչ վերաբերում է առարկողի այն փաստարկին, որ իրենց վստահորդի՝ «Ինտերոյլ» ՍՊԸ-ի և «Կրեատիվ» ընկերության միջև 2007թ-ի ապրիլի 14-ին կնքվել է լիցենզային պայմանագիր, որի երկրորդ կետի համաձայն՝ մեր վստահորդը «Կրեատիվ» ընկերությանը թույլ է տալիս օգտագործել իրեն պատկանող «ДИВНОЕ» ապրանքային նշանը Ուկրաինայում և ԱՊՀ երկրներում և հետևաբար, 2007թ-ի հոկտեմբերի 4-6 Թբիլիսիում անցկացված Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսին մասնակցել է մեր վստահորդի թույլտվությամբ, ապա լիցենզային պայմանագրով նախ տրված է ապրանքային նշանի օգտագործման թույլտվություն, այլ ոչ թե ցուցահանդեսին մասնակցելու, երկրոդ՝ լիցենզային պայմանագրի առկայությունը չի բացառում ցուցահանդեսային առաջնությունը, երրորդ՝ լիցենզային պայմանագիրը չի պարունակում ապրանքային նշանը այլ երկրներում, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում գրանցելու սահմանափակումներ:

Բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը, հաշվի առնելով կոլեգիայի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման

խորհուրդը եկավ եզրակացության, որ «ДИВНОЕ» գրանցման թիվ 13021 բառային ապրանքային նշանը գրանցվել է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի խախտմամբ, համաձայն որի «Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են՝ ա) նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի անունով արդեն գրանցված կամ գրանցման ներկայացված (եթե դրանց հայտերը հետ կանչված կամ մերժված չեն) ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին.»: Տվյալ դեպքում «Կրեատիվ» ՓԲԸ կողմից ներկայացված «ДИВНОЕ» բառային ապրանքային նշանը (գրանցման հայտ թիվ 20080303) ունի ավելի վաղ ցուցահանդեսային առաջնություն՝ 07.10.2007թ, քան «Ինտերոյլ» ՍՊԸ-ի անվամբ գրանցված «ДИВНОЕ» գրանցման թիվ 13021 բառային ապրանքային նշանի առաջնությունը՝ 12.11.2007թ.:

Ելնելով դրանից և ղեկավարվելով է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով, 28-րդ հոդվածի1-ին մասի «ա» ենթակետով, «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 74-րդ կետի «ա» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Կրեատիվ» ՓԲԸ-ի 2008թ. օգոստոսի 16-ի բողոքը և «ДИВНОЕ» գրանցման թիվ 13021 բառային ապրանքային նշանի գրանցումը ամբողջովին անվավեր ճանաչել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան